





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԳԻՊՈՒԽ ՈՒՆԵՑԱԾ Է ՃԻՐՆԱԾՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Աշխատանքային այցելությանը Փարիզ գլուխող Յայնստանի Յանրապետության նախագահ Արմեն Սարգսեան հանդիպում ունեցած է ՀՀԳ Բիւրոյի անդամ, Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահ Մուրատ Փափագեանի եւ Յայնկական բարեգործական ընդհանուր միութեան (ԲԸԸ) Ֆրանսայի եւ ՀԲԸԸ-ի Երոսպայի նախագահ Նատիա Գործունեանի հետ:



Յանրապետութեան անդամ-դարձած է Թուրքիոյ ռազմաքաղաքական աշակերտութեամբ Ազրայէճեանի կողմէ Արցախի Յանրապետութեան նկատմամբ սանձազերծուած լայնածաւալ ռազմական յարձակումներուն եւ ներկայացուցած ստեղծուած իրաւիճակը: Կարեւոր նկատելով սփիւռքի հայկական կառույցներուն կողմէ կատարուած եւ կատարուող աշխատանքները, ինչպէս նաեւ սփիւռքահայութեան համախմբուած տարաբնոյթ աշակերտութիւնը հայրենիքին՝ Յայնստանի նախագահը այդ ծիրին մէջ բարձր գնահատած է նաեւ Ֆրանսայի հայկական կառույցներուն կողմէ կատարուող քայլերը:

Մուրատ Փափագեան եւ Նատիա Գործունեան նշած են, որ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւնները, ամբողջ ֆրանսահայ համայնքը այսուհետեւ եւս կը շարունակեն աշակերտութեան գործողութիւնները հայրենիքին եւ բոլոր ջանքերը կը գործարդեն ստեղծուած իրաւիճակին վերաբերելու հաւաստի տեղեկատուութիւնը տեղի հանրութեան ներկայացնելու համար:

Մուրատ Փափագեան եւ Նատիա Գործունեան նշած են, որ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւնները, ամբողջ ֆրանսահայ համայնքը այսուհետեւ եւս կը շարունակեն աշակերտութեան գործողութիւնները հայրենիքին եւ բոլոր ջանքերը կը գործարդեն ստեղծուած իրաւիճակին վերաբերելու հաւաստի տեղեկատուութիւնը տեղի հանրութեան ներկայացնելու համար:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՅՑ ԱՆՈՒՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄԸ ԵԿԵՂԵՑՒՅՑ

Երեկ՝ կիրակի, 25 հոկտեմբեր 2020-ին, Ս. Նշան մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահե արք. Փանոսեան եկեղեցւոյ մէջ մատուցեց Ս. պատարագ, որուն ընթացքին ան կատարեց օրհնութեան կարգ՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով վնասներ կրած եւ այժմ վերանորոգուած եկեղեցւոյ:



Իր քարոզին մէջ առաջնորդ սրբազանը նկատել տուաւ, որ հաւատքով եւ աշխատանքով եկեղեցւոյ աւերածութիւնը կամայ-կամաց վերականգնելով սկսած են վերադառնալ բնականոն կեանքի՝ աւելցնելով, որ պայթումի բոլոր հետեւանքները չեն դարմանուած, սակայն կարելի է սոյն աղօթքավայրին մէջ մեր խնդրանքները առաքել առ Աստուած: Առաջնորդ սրբազանը ըսաւ, որ թեմի մնացեալ եկեղեցիները, որոնք վնասներու ենթարկուեցան Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով կը գտնուին միեւնոյն վիճակին մէջ, եւ ամէն տեղ աշխատանքը կը շարունակուի՝ յոյս յայտնելով, որ ձմեռանամուտէ առաջ վնասները դարմանելով պատեհութիւնը կ'ունենանք մեր եկեղեցիներուն մէջ շարունակելու մեր



հոգեւոր ու համայնական կեանքը: Առաջնորդ սրբազանը շնորհակալական խօսք ուղղեց Սարգիս Զապաղուրեանին, որ պայթումէ անմիջապէս ետք իրեն ներկայանալով իր ամբողջական աշակերտութիւնը յայտնած է, եւ անոր ընծայած կարելիութիւններուն շնորհիւ ամէն բան փուլ առ փուլ կը վերադառնայ իր նախկին վիճակին: Առաջնորդ սրբազանը մաղթեց, որ Աստուած վարձատրուի ըլլայ բոլոր անոնց, որոնք հաւատքով եկեղեցի կը կառուցեն ու կը վերակառուցեն եւ զայն կը պահեն ի նշան մեր ժողովուրդի քաջութեան եւ տոկոսութեան:

Շահե արք. Փանոսեան անդրադառնալով նոյն օրը գումարդիպող Գիւտ խաչի տօնին, պատմական ակնարկ մը նետեց 4-րդ դարուն պատահած եկեղեցիներուն վերակառուցմանը, որոնք իրենց շնորհակալական կրօնի յարթեանակին եւ Զրիստոսի հետեւորդներու խրախուսիս: Սրբազանը նկատել տուաւ, որ դարեր ետք եկեղեցին տակաւին կը խօսի խաչի եւ խաչեցեալի մասին՝ յիշեցնելով հաւատացեալները, թէ խաչը մեր Տիրոջ՝ Զրիստոսի գորութիւնն է: «Նախքան Զրիստոսի խաչելութիւնը խաչը մահուան գործիք էր, եւ կը խաչուէին ծանրագոյն յանցանքներով մեղապարտները, որպէսզի խաչին վրայ երկար տանջանքով կը կրէին իրենց մահկանացուն: Բայց Զրիստոսի խաչելութեամբ, խաչը դարձաւ կեանքի ճանապարհ, գորութեան աղբիւր:

Շար.ժ՝ էջ 4



«ԳՈՅԱՄԱՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ» ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 4 columns: Donor Name, Amount, Donor Name, Amount. Lists various donors and their contributions to the 'Հայաստանի Կարգ' charity.

ԻՐԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՌԱԶՄԱՓՈՐՉԵՐ ԿԱՏԱՐԱԾ Է...

Շարունակուած Ա. էջէն

Ռազմափորձերուն մասնակցած են Իրանի բանակի ցամաքային ուժերը, գործարկուած են հրետանային եւ զուակային մարզերը, ինչպէս նաեւ անօդաչու թռչող սարքեր: Կը նշուի, որ ռազմափորձերուն առաջարկները Եր սահմանամերձ շրջաններուն մէջ զինուած ուժերու մարտական պատրաստակամութեան ստուգումը:

րինի եւ Ջուրայի շրջաններու բնակչութեան անվտանգութիւնը պաշտպանելու համար, պահակագունդի ցամաքային ուժերու «Իմամ Է Զաման» ջոկատը պիտի տեղակայուի սահմանի երկայնքին: «Ազարի»-ն եւս Իրանի զինեալ ուժերու սպառազինութեան տեղափոխման մասին տեսանկիւր հրապարակած է՝ նշելով, որ կը թուի, թէ Իրան այս գործողութիւններուն տր թափ հաղորդած է, երբ ահաբեկիչներ ուղարկելէ բացի՝ Թուրքիան յայտարարած է, որ նպատակ ունի շանտաճորդ գրաւել եւ Յայաստան-Իրան սահմանը կտրել:

19 հոկտեմբերին Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը յայտարարած էր, որ Թեհրանի համապատասխան արձագանգ պիտի տայ իր տարածքին ուղղութեամբ հասցուած հարուածներուն:

Իրանեան ԻՐՆԱԿ լրատու գործակալութիւնը, յղում կատարելով «Սեփահիւր»-ին, նոյնպէս յայտնած է, որ Յեղափոխական պահակագունդի ցամաքային ուժերու «Իմամ Է Զաման» ջոկատը տեղակայուած է Իրանի հիւսիսարեւմտեան սահմաններուն վրայ: Ըստ հրապարակումին, երկրին անվտանգութիւնը ապահովելու համար հրասայլեր եւ այլ սպառազինութիւն տեղակայուած են Խոտաֆարինի եւ Նախիջեանի սահմանակից Ջուրայի շրջաններուն մէջ:

